

УДК 633.88

Ա. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ, Կ. Ս. ՄԱՐԶԱՆՅԱՆ

ԴԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԻ ՔԱՆԻ ԹՈՒՆԱՎՈՐ ԲՈՒՅՍԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ,
ՏՈՔՍԻԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԲՈՒԺԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոգվածում նկարագրված են մի քանի թունավոր բույսերի բուժական և հատկապես տոքսիկոլոգիական հատկությունները (ըստ հին և նոր հեղինակների) ճանաչման նպատակով:

Թունավոր բույսերի դերն ու նշանակությունը խիստ կարևոր է ինչպես բժշկության, այնպես էլ գյուղատնտեսության և անասնապահության բնագավառներում, քանի որ մարդու համար վտանգավոր են այն անասունների կաթըն ու միսը, որոնք կերել են թունավոր բույսեր, օրինակ՝ ընձախոտ [25]:

Բուսաբանության մեջ հաշվում են շուրջ 10 հազար թունավոր բույսեր, որոնք կազմում են ամբողջ բուսատեսակների 2%-ը [10]: Բույսի թունավոր հատկությունը պայմանավորված է նրա մեջ պարունակող ալկալոիդներով, գլիկոզիդներով, սապոնիններով, խեժերով, ածխաջրածիններով և այլն: Միշտ չէ, որ թունավոր է ամբողջ բույսը, ինչպես, օրինակ, մզամուճը, անդուզը, կան բույսեր, որ առավելապես թունավոր են պտուղներով (գալլահատ, կենի), արմատով (լոշտակ), կոճղարմատով (սև դանձլամեր, մուլախինդ), ցողունով, տերևներով (բալդրդան, գինազոխ), արձակած եթերային յուղերով (մադնուլիա, վազրենի շուշան, գարշահոտ թանթրվենի) և այլն: Մյուս կողմից հատկանշական է այն, որ թունավոր բույսերը ընտրողաբար են ներգործում կենտրոնական ներվային, սիրտ-անոթային, շնչառական համակարգությունների, մարսողական տրակտի օրգանների, մաշկի վրա և այլն: Թունավորում կարող է առաջանալ տվյալ բույսի հետ շփվելու, նրա արտազատած ցնդող նյութերը շնչելու, ուտելու կամ ոչ մասնագետի խորհրդով տվյալ բույսը բուժական նպատակով սխալ ձևով օգտագործելու հետևանքով:

Դիլիջանի շրջակայքում թունավոր բույսերից հաճախ հանդիպում են մորմը, լոշտակը, արջընկույզը, գալլուկը, բանգին (տնամերձ հողամասերում, այգիներում, ցանկապատերին, գարշահոտ թանթրվենին, գինազոխը (աղբուտներում և ձորեզրներին), ողկուզակը, մուլախինդը, ընձախոտը, բալդրդանը, վազրենի շուշանը (անտառային քարքարոտ բարձունքներում, արևակեղ լանջերին), գալլահատը, սև դանձլամերը, անդուզը (ալպյան մարգագետիններում, հիմնականում ծովի մակերևույթից 1300 մ և ավելի բարձր սարալանջերին), մզամուճը (խառն անտառների ծառերի վրա, որպես պարազիտ բույս), կենին (Լեխնարաթ վանքի շրջակայքում, Սպիտակ ջրի հովտում), կծու հրանուկը, նվիկը, ցախակեռասը (անտառի ծմակներում, խոնավ բացատներում, գետափերին) և այլն:

Նշենք, որ որոշ թունավոր բույսեր, ինչպես, օրինակ, բալդրդանը, նվիկը, գալլուկը և այլն, հատուկ մշակումից հետո կորցնում են իրենց թունավոր

հատկությունները և միանգամից անվտանգ են դառնում ուտելու նպատակով օգտագործման համար:

Մեր կողմից (Ա. Ա. Թորոսյան) Դիլիջանի պայմաններում հավաքվել և մասնակիորեն ուսումնասիրվել են շուրջ 350 տեսակի դեղաբույսեր: Սույն հոդվածում կանգ կառնենք միայն մի քանի առավել աչքի ընկնող թունավոր բույսերի վրա, որոնցով թունավորման կլինիկական պատկերի իմանալը մեծապես կնպաստի ոչ միայն տվյալ բույսի ճանաչմանը, այլև անհրաժեշտ բուժական օգնության կազմակերպմանը:

Ողկուզակ—*Dictamnus albus* L. (ясенец) (նկ. 1): 50—120 սմ բարձրությամբ բազմամյա խոտաբույս է՝ սատապազգիների ընտանիքից: Ունի բաց վարդագույն խոշոր ծաղիկներ: Բույսը հարուստ է գեղձերով, որոնք արտադր-



Նկ. 1. Ողկուզակ:

րում են 0,15% եթերային յուղեր: Այդ յուղերը շատ արագ բռնկվում են կրակից և ունեն չափազանց անդուրեկյան հոտ: Արմատից ստացվում են դիկտամնին, սկիմմիանին, դիկտամնոլակտոն [6]: Ըստ Ս. Շահրիմանյանի [25], այդ բույսը (որը նա կոչում է երկնուրի) «ընկալեալ յորդորէ զդաշտան իդաց, վաղվաղակէ զծնունդ, վարէ զծին, և շաղմն մեռեալ, նպաստէ օձահարաց...»: Իտալիայում արմատը կիրառվում է ներվային հիվանդությունների և սեքսուալաթուլոգիայի [28], Հնդկաստանում՝ ընդհատվող կաղության [27], Չինաստանում՝ տրուպիական մալարիայի, դեղնախտի, քոսի և մաղաթափության [7], Բուլղարիայում՝ ունեատիլմի, դինեկոլոգիական մի շարք հիվանդությունների և էպիլեպսիայի [8] ժամանակ: Տվյալներ կան, որ բույսի վերդետնյա մասից պատրաստված մզվածքը արագացնում է արյան մակարդվելիությունը [19]:

Թունավոր են ողկուղակի տերևները, պտուղները և արմատը: Թունավորում առաջ է գալիս բույսի հետ շփվելուց, նրա եթերային յուղերը շնչելուց և սխալ եղանակով բուժվելուց: Ուշագրավ է, որ սրա մեջ պարունակվող դիկտամնինի անգամ 0,05—0,055 մգ դոզան մահացու է սպիտակ մկան համար [7]: Ողկուղակը մաշկի հետ շփվելուց առաջ է բերում խիստ ցավոտ և երկար ժամանակ չլավացվող խոցային դերմատիտ, որը իր կլինիկական պատկերով հիշեցնում է մաշկի իպրիտային ախտահարումը [7]: Այս դերմատիտը բնորոշ է նաև նրանով, որ լավանալուց հետո տեղում թողնում է խորր սպիներ և հիպերպիգմենտացիա: Ախտահարման նման վիճակը, որ դիտվել է նաև մեր կողմից, հիմնականում առաջանում է նուրբ մաշկ ունեցող մարդկանց մոտ, բույսի հետ պատահականորեն շփվելուց: Մեր արձանագրած դեպքերը բնորոշ են եղել նաև մաշկի ալրոցով և քորով, իսկ անդուրեկան հոտի երկարատև շնչումը առաջ է բերել նողկանք և ուժեղ գլխացավ:

Գինազոխ — *Conium maculatum* L. (белоглов): Հայնորեն տարածված խոտաբույս է՝ հովանոցավորների ընտանիքից: Ունի սնամեջ ցողուն, սպիտակ մանրիկ ծաղիկներ: Ցողունի վրայի կարմրա-դարչնագույն բծերով հեշտությամբ տարբերվում է հանրածանոթ շուշանից:

Գինազոխը, մինչ ցողունի դուրս գալը, շատ նման է նաև մաղադանոսին, իսկ սերմերով՝ սամիթին: Այստեղից էլ թունավորման լայն հնարավորությունները: Բույսը ունի մկան սպեցիֆիկ հոտ: Թունավոր են սերմերը, ցողունը և տերևները՝ իրենց մեջ պարունակվող պակոկոնհիդրին և կոնիին ալկալոիդների շնորհիվ, որոնք իրենց թունաբանական ազդեցությամբ բավականաչափ հիշեցնում են նիկոտինը և կուրարին [5]: Գինազոխը հիմնականում թունավոր է թարմ վիճակում, շարանալուց հետո այն կորցնում է իր ակտիվությունը [6]: Սրա թունավոր ալկալոիդները սկզբում գրգռում են ներվային համակարգը, ապա պարալիզում շարժիչ ներվերի վերջույթները: Թունավորման հիմնական նշաններն են՝ բերանի ալրոց, կոկորդում քերծվածքի զգացում, թքահոսություն, գլխացավ, փսխում, լուծ, ցավեր փորի շրջանում, ուշաթափություն: Ավելի ծանր դեպքերում վրա է հասնում քնկոտությունը, լայնանում են բերը, առաջ է գալիս մաշկի պարեսթեզիա, դիսֆագիա, ցրնցումներ, դանդաղում է սրվար, ընկնում արյան ճնշումը և մարմնի ջերմությունը: Մահը վրա է հասնում շնչառական կենտրոնի պարեզից [5, 17]: Ոչ սակավ դեպքերում թունավորում նկատվում է ինքնաբուժության ժամանակ: Բույսի ոգեթուրմը, կաթիլների ձևով, կիրառվում է ժողովրդական բժշկության և հոմեոպաթիայի մեջ ստամոքսի սուր ցավերի, փորկապության, միզակապության, դիսմենորեայի, սակավարյունության և հազի ժամանակ [5, 18, 23]:

Գարշահոտ քանրվենի — *Sambucus ebulus* L. (бужина вонючая): Սպիտակ, կարմրավուն ծաղիկներով, մանրիկ կորիզապտուղներով 60—150 սմ բարձրությամբ, բաղամամյա խոտաբույս է, այժատերևազդիների ընտանիքից: Ամբողջ բույսն ունի չափազանց անդուրեկան հոտ: Անասունները չեն ուտում: Այն իր մեջ պարունակում է խնձորաթթու, գինեթթու, դաբաղիչ և դառը նյութեր, եթերային յուղեր: Տերևներում հայտնաբերվել են ցիանոգեն գլիկոզիդներ, իսկ արմատում կապտածնաթթու: Պտուղների մեջ պարունակում է D-սմիգդալին: Թունավոր է բույսն ամբողջովին, առավելապես պտուղները [13, 26]: Թունավորում առաջ է գալիս, երբ բույսը ուտում են պատահակա-

նորեն, կամ էլ մեծ դողանքով՝ ինքնարուժման նպատակով կիրառելիս, Թունավորման հիմնական նշաններն են՝ նողկանք, փսխում, լեզվի այրոց, քթահոսություն, շնչառության դժվարացում, գլխացավեր: Ծանր դեպքերում առաջ է գալիս կուլապս, գիտակցության խանգարում [17]: Մեր կողմից Թունավորման դեպքեր արձանագրվել են նաև գարշահոտ թանթրվենու հոտից, որի ընթացքում ախտահարման կլինիկական պատկերի առաջին պլանի վրա են ուժեղ գլխացավերը, փսխումը, սրտխփոցները: Ի դեպ, բույսը բուժական նպատակներով օգտագործվում է միայն ժողովրդական բժշկության [25] և հոմեոպաթիայի մեջ. հիմնականում ջրգողության, նեֆրիտների և շաքարային դիաբետի ժամանակ: Արմատն օժտված է արտակարգ միզամուղ և քրտնամուղ հատկություններով [13, 20]: Բույսը հայկական ժողովրդական բժշկության մեջ կիրառվել է ուռուցքների ժամանակ [21], իսկ Թուրքմենիայում՝ մալարիայի դեպքում [15]:

Վազրենի շուշան — *Lilium tigrinum* Ker-Gawl. (лилия тигровая): 40—150 սմ բարձրությամբ, սոխուկավոր բույս է՝ շուշանազգիների ընտանիքից: Ունի դարչնագույն բծերով չափազանց անդուրեկան հոտով խոշոր դեղին ծաղիկներ: Իր մեջ պարունակում է գլիկոզիդներ, որոնք հիմնականում չեն ուսումնասիրված: Մասնավորապես կիրառվում է հոմեոպաթիայում, որպես դաշտանային ցիկլը կանոնավորող միջոց [5, 6]: Ձեռքի տակ եղած մի շաքաղբյուրներում չեն նշված բույսի Թունավոր հատկանիշները: Մինչդեռ մեր տվյալներով վազրենի շուշանը Թունավոր է իր արձակած եթերային յուղերով և մաշկի հետ շփման մեջ մտնելուց: Վատ օդափոխված սենյակում, այն առաջ է բերում քնկոտություն, նողկանք, փսխում, ապատիկ վիճակ, սրտի աշխատանքի դանդաղում, արյան ճնշման անկում: Ծանր դեպքերում նկատվում է ուշազնացություն: Մաշկի հետ շփվելուց առաջ է գալիս արտիֆիցիալ դերմատիտ՝ բնորոշ այրոցով և քորով, որոնք որոշ դեպքերում ուղեկցվում են մարմնի ընդհանուր ջերմության բարձրացումով:

Շրջահյուս — *Periploca graeca* L. (обвойник греческий) (նկ. 2): Գեղեցիկ շրջահյուսվող թուփ է, թունաթափազգիների ընտանիքից, մինչև 12 մ բարձրությամբ: Ամբողջ բույսից արտադրվում է հիմնային ռեակցիայի Թունավոր կաթնահյութ, որը հնում աֆրիկյան ցեղերի կողմից օգտագործվել է նետեր Թունավորելու, իսկ որսորդության մեջ՝ գայլեր որսալու համար: Այդ հյութը իր մեջ պարունակում է գլիկոզիդներ, որոնցից են պերիպլոցինը՝ ազլյուկոնը, պերիպլոգենինը: Վերջինս նման է ստրոֆանթինին, իր կենսաբանական ակտիվությամբ զիջելով նրան 3—4 անգամ [2, 5, 6]:

Շրջահյուսի ծաղիկները ունեն ծանր, թմրեցնող հոտ, որով և ազդում են օրդանիդի ընդհանուր վիճակի վրա, առաջ բերելով Թունավորման երևույթներ [1]: Թունավորում առաջ է գալիս բույսի հետ անզգուշաբար շփվելուց, ինչպես նաև բուժման նպատակով նրա գերդոլավորումից: Թունավորման ընթացքում բնորոշ է սարմնի թուլությունը, ստամոքսի շրջանի ցավը, բրդկոցը, նողկանքը, փսխումը, լուծը, գառանցանքը: Պուլսը լինում է դանդաղ և լարված՝ էքստրասիստոլիկ բիգեմինիայի ձևով: Վերջույթները լինում են սառը, բրբրը՝ լայնացած, մեզի քանակը՝ քչացած: Ավելի ծանր դեպքերում հատկանշական է կոման, ուժեղ ցնցումները [17]: Շրջահյուսը վաղուց ի վեր կիրառվում է գիտական բժշկության մեջ: Օժտված լինելով ստրոֆանթինային հատկություններով, լայնորեն կիրառվում է սրտի հիվանդությունների դեպ-



Նկ. 2. Շրջահյուս:

քում, հատկապես սրտի II A° և IIB°-ի անբավարարությունների ժամանակ [14],

Բալդրդան — *Heracleum mantegazzianum* Som. (борщевик): Երկամյա կամ բազմամյա խոտաբույս է, մինչև 2 մ հասնող հզոր ցողունով՝ հովանոցավորների ընտանիքից: Ամբողջ բույսն ունի յուրահատուկ հոտ: Տերևները, ծաղիկներն ու սերմերը պարունակում են եթերային յուղ, իսկ արմատն ու կոճղարմատը՝ գլյուտամին, արգինին, գալակտան, վիտամին C, E, կարոտին, ֆիտոնցիդներ [8]: Թունավոր են բույսի տերևներն ու ցողունը, որոնք շփվելով մաշկի հետ առաջ են բերում այրվածք և երկար ժամանակ չլավացող վերքեր [26]: Մաշկի վրա առաջ են գալիս խոշոր բշտիկներ, սկզբում կիսաթափանցիկ, իսկ 1—2 օրից հետո՝ արյունախառն հեղուկով: Բնորոշ է մաշկի ուժեղ այրոցը, քորը, ջերմության բարձրացումը մինչև 39°: Վատանում է հիվանդի ընդհանուր ինքնազգացումը, առաջ են գալիս գլխացավեր, մարմնի ջարդվածություն և այլն: Ի դեպ, բույսի թարմ ցողունը և տերևակոթերը օգտագործվում են ուտելու համար՝ թթու դրած և սալաթի ձևով [3, 24]: Ժողովրդական բժշկության մեջ կիրառվում է վատ ախորժակի, ստամոքսի և աղիքների բորբոքումների, լուծի, ներվային և մաշկային որոշ հիվանդությունների դեպքերում [5, 8, 11, 12]:

Դալյանատ — *Daphne mezereum* L. (волчье лыко). (Նկ. 3): Սակավաճյուղ թուփ է, մինչև 1,5 մ բարձրությամբ, բուրավետ, յասամանագույն ծաղիկներով, կլորավուն, վառ կարմիր գույնի պտուղներով, գոճմակազգիների ընտանիքից: Իր մեջ պարունակում է գլյուկոզիդներ (դաֆնին, կոկկոզին), խեժ (մեզերին), խիստ անհուր հոտով և եթերային յուղեր և այլն [1, 4, 5, 11]:



Նկ. 3. Գայլահատ

Թունավոր են բույսի ծաղիկները, պտուղները, տերևները, կեղևը, արմատը։ Թունավորում առաջ է գալիս պտուղներն ուտելու դեպքում, որոնք բավականին քաղցր են՝ շնորհիվ իրենց մեջ պարունակվող շաքարի, ինչպես նաև բույսի արտադրած հյութի հետ մաշկի շփումից։ Մեր տվյալներով թունավորման դեպքեր նկատվել են նաև ծաղկի հոտից, երբ վաղ գարնանը որպես «անտառային յասաման» դրվում է սենյակներում։ Նման պարագաներում թունավորման պատկերը արտահայտվել է ընդհանուր թուլությամբ, քնկոտությամբ ապատիայով, նողկանքով։ Պտուղներով թունավորվելը հաճախ հիշեցնում է ատրոպինային թունավորումը։ Առաջ է գալիս փսխում, լուծ, կոկորդում բերծվածքի զգացում, բերանի չորություն, ցավեր ստամոքսում, դըլխապտույտ, վախ, տեսողության խանգարում, վերջույթների դող, սրտային առիթմի, շնչառության խանգարում [17]։ Բույսի կեղևը և պտուղները բուժական նպատակով կիրառվում են ժողովրդական և հոմեոպատիկ բժշկությունում, հիմնականում ունեւատիզմի, այտուցների, տարբեր բնույթի դիաթեզների, ինչպես նաև մաշկային և ներվային հիվանդությունների ժամանակ [5, 6, 11]։ Ըստ Ս. Շահրիմանյանի [25] «...տերևք, պտուղք և կեղև... ի դործածին մեծազդու թեւամբ ի յուսահատ գրգռողութեան»։

Ղանձլամեր—*Helleborus caucasicus* Br. (морозник) (Նկ. 4)։ Բազմամյա խոտաբույս է, կտրտված տերևներով և սպիտակ կամ կարմրավուն հոտավետ ծաղիկներով՝ դորտնուկազգիների ընտանիքից։ Իր մեջ պարունակում է սրտի վրա ներգործող գլյուկոզիդներ, որոնցից են հելեբորինը, հելեբորբինը, հելեբորսիդը և կորեյբորինը։ Վերջինս օժտված է ստրոֆանթինանման հատկությամբ և ներքին ընդունման ու ներերակային սրսկման ձևով կիրառվում է



Նկ. 4. Սև դանձլամեր:

սիրտ-անոթային համակարգի II և III^o-ի անբավարարությունների ժամանակ [14]: Ժողովրդական բժշկության մեջ սև դանձլամերը կիրառվում է երիկամային հիվանդությունների ժամանակ, որպես միզամուղ, ինչպես նաև թութքի, ուռուցքների, հազի, պլերիտիզի, թոքային պալարախտի, թարախային վերքերի, գլխի մաշկի թեփոտության բուժման համար և այլն [8]: Բույսի բուժական և թունավոր հատկությունների մասին դեռ իր ժամանակին նշել է Մխիթար Հերացին: Անվանի բժշկապետը [16] այն կիրառել է մելանխոլիայի բուժման համար, ինչպես նաև որպես լեղամուղ միջոց: Թունավոր են բույսի սերմերը, արմատը, կոճղարմատը, տերևները: Անասունները այն չեն ուտում: Թունավորում առաջ է գալիս ինքնաբուժման և պատահականորեն ուտելու հետևանքով [8]:

Թունավորման պատկերը հիշեցնում է մատնոցուկային թունավորումը, բնորոշ ընդհանուր թուլությամբ, վերջույթների սառեցումով, գլխացավով, լուծով և փսխումով, բերրի լայնացմամբ, պուլսի դանդաղադարկությամբ, իսկ ավելի ծանր դեպքերում առաջ է գալիս կոմատոզ վիճակ՝ արտահայտված ցնցումներով [17]: Թունավորման բոլոր դեպքերում գոյություն ունի ընդհանուր բուժում, որի նպատակն է մաշկի կամ լորձաթաղանթների վրայից մեխանիկորեն կամ քիմիական չեզոքացման եղանակով հեռացնել թույնը, մինչդեռ ստամոքսա-աղիքային տրակտից այն հեռացնել հաջողվում է տքնաջան լվացումների և անտիդոտների միջոցներով: Մաշկի արխտահարման դեպքում անհրաժեշտ է ջրով և օձառով լվանալ մաշկը, ապա տեղը մշակել 2%-անոց KMnO_4 -ի լուծույթով: Բշտիկների առկայության դեպքում ստերիլ պայմաններում, պետք է բացել վիրջիններս, հեռացնել նրանց պարունակու-

թյունը, տեղը մշակել դարձյալ $KMnO_4$ -ի լուծույթով, իսկ հաջորդ օրերում օգտագործել որևէ անտիալերգիկ և հակաբորբոքիչ քսուկ (օքսիկորտ, լոկակորտեն, սինալար, ֆտորոկորտ, ուլտրալան, դերմագոլոն և այլն): Աչքի վրայից թույնը ջրով և օձառով հեռացնելուց հետո, լվացումը շարունակվում է ֆուրացիլինի կամ ռիվանոլի լուծույթներով, իսկ հաջորդ օրերում օգտագործվում է վերոհիշյալ քսուկներից որևէ մեկը:

Մարսողական տրակտի լվացման համար լայնորեն կիրառվում են հիդրոկարբոնատային հանքային ջրեր, 2%-անոց ճաշի սոդայի լուծույթ: Հիանալի անտիդոսային հատկությամբ են օժտված 2—3%-անոց տանինի լուծույթը, ձվի հարած սպիտակուցը, թարմ կաթը, ինչպես նաև ունիվերսալ անտիդոտը, որն իր մեջ պարունակում է ալտիվացրած ածուխ (50,0), տանին (25,0) և այրած մագնեզիում (25,0): Անտիդոտները նստեցնում են թունավոր ալկալիոիդները և փլուկոզիդները, ադսորբցում ցնդող թունավոր նյութերը և չեզոքացնում հիմքերն ու թթուները: Թույնը արյան մեջ ներթափանցելու դեպքում հուսալի արդյունք են տալիս միզամուղները, լուծողականները, հակաթույնները և կոմպլեքսոնները [9, 14, 17]:

Դիլիջանի քաղաքային հիվանդանոց

Ստացված է 10.IX 1974 թ.

А. А. ТОРОСЯН, К. С. МАРДЖАНЯН

ОБ ЭКОЛОГИЧЕСКИХ, ТОКСИКОЛОГИЧЕСКИХ И ЛЕЧЕБНЫХ ОСОБЕННОСТЯХ НЕКОТОРЫХ ЯДОВИТЫХ РАСТЕНИЙ ОКРЕСТНОСТЕЙ ДИЛИЖАНА

Р е з ю м е

Ядовитые растения составляют 2% всей растительности, тем не менее по незнанию они могут приносить большой вред.

В статье рассматриваются некоторые растения (из окрестностей Дилижана): *Dictamnus albus* L., *Conium maculatum* L., *Sambucus ebulus* L., *Lilium tigrinum* Ker-Gawl. *Periploca graeca* L., *Heracleum mantegazzianum* Som., *Daphne mezereum* L. и *Helleborus caucasicus* Br. — с точки зрения их лечебных и, в частности, токсикологических свойств по старым и новым авторам.

Պ Ր Ա Շ Ա Ն Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Бородина Н. А., Некрасова В. И., Некрасова Н. С., Петрова И. П., Плотникова Л. С., Смирнова Н. Г. Деревья и кустарники СССР. М., 1966.
2. Б С Э т. 30, М., 1954.
3. Верзлин Н. По следам Робинзона. Л., 1953.
4. Волкова П. А., Долгова А. А., Иванова С. Д., Люкшенкова Е. А., Львов Н. А., Раздорская Л. А., Родионова В. М. Дикорастущие лекарственные растения РСФСР. М., 1963.
5. Землинский С. Е. Лекарственные растения СССР. Медгиз, 1958.
6. Золотницкая С. Я. Лекарственные ресурсы флоры Армении. 2, Ереван, 1965.

7. Ибрагимов Ф. И., Ибрагимова В. С. Основные лекарственные средства китайской медицины. М., 1960.
8. Иорданов Д., Николов П., Бойчинов А. Фитотерапия. София, 1968.
9. Карасик В. М. Руководство по внутренним болезням. 10, Медгиз, 1963.
10. Кроктова И. И. Дет. энцикл., 4, М., 1965.
11. Крылов Г. В. Травы жизни и их искатели, Новосибирск, 1972.
12. Махлаюк В. П. Лекарственные растения в народной медицине. Саратов, 1967.
13. Мацку Я., Крейча И. Атлас лекарственных растений. Братислава, 1970.
14. Машковский М. Д. Лекарственные средства, книга, I, II, М., 1972.
15. Минервин В. Н. Докт. дисс., М., 1949.
16. Мхитар Герацц Утешение при лихорадках. Ереван, 1968.
17. Николаев М. П. Справочник практического врача. 2, М., 1956.
18. Носаль М. А., Носаль И. М. Лекарственные растения и способы их применения в народе. Киев, 1958.
19. Петров М. И., Ядров М. Н. Уч. зап. Пятигорск. фармац. ин-та, 5, 1965.
20. Попов А. П. Лекарственные растения в народной медицине, Киев, 1969.
21. Сепетчян А. О. В сб.: Лекарственные растения Армении и их лечебные препараты, 1949.
22. Торосян А. А. Биологический журнал Армении, 10, 68, 1969.
23. Флёров В. А. Дикорастущие лекарственные растения. Ростов, 1970.
24. Цатурян Т. Г. Дикорастущие съедобные растения Армении. Ереван, 1959.
25. (Шариманян С.) Ս. Շահրմանյան. Տեղաբանութիւն կամ փղորայ Հայաստանի, Տփղիս, 1818 (Матенадаран им. М. Маштоца, рук. № 6267).
26. Шретер А., Скляревский Л. БМЭ, 35, 1964.
27. Chopra R. N. Indigenous drugs of India, 1933.
28. Negril Y. Nuovo erbario figurata, Roma, 1948.